

ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ Նունե Մովսիսյանի ելույթը „Էպոսի օր,,
միջոցառման ժամանակ

Այսօր, 2016 թվականի հոկտեմբերի 9-ին Արագածոտնի մարզում տեղի է ունենում 3 միջոցառում: Այստեղ, Ներքին Բազմաբերդ համայնքում նշվում է ազգային Էպոսի տոնը: Աշտարակ համայնքում՝ Յոթ մուսանների այգում, Մշակույթի ֆոնդի նախագահ Արեւշատ Ավագյանի նախաձեռնությամբ նշվում է Ընկուզատոն, իսկ Արտաշավան համայնքում՝ քրիստոնեության 1700 ամյակի առիթով կանգնեցված 33 մ. բարձրությամբ խաչին 1716-րդ խաչի տեղադրման արարողություն:

Էպոսը մեր ինքնությունն է, մեր ազգային նկարագիրը: Էպոսի յուրաքանչյուր հերոս առանձնանում է իր քաջությամբ, ազգապահպան նվիրվածությամբ: Այս փառատոնը հրաշալի առիթ է մեր սերունդներին՝ շփվելու Էպոսի հետ, անգիր սովորելու հատվածներ, ծանոթանալու Էրզրի բառուբանին, բարքերին ու սովորույթներին: Էպոսը համահավաք նկարագիրն է հայ ժողովրդի:

Ամեն տարի ՀՀ-ի բոլոր մարզերից նախնական փուլը հաղթահարած լավագույն աշակերտները հավաքվում են Արագածոտնի մարզում՝ մասնակցելու այս հրաշալի տոնակատարությանը:

Տեր լինենք մեր ազգայինին, հպարտանանք մեր Էպոսով, դասեր քաղենք նրանից եւ արժանապատվորեն այն փոխանցենք նոր սերունդներին: